«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«22» 09 2015թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի տեղակալ
_____ Հ. Այունց
ՍՖ-ԳԲԽ-19/15 բողոքը քննող
հանձնաժողովին

## Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2014թ. թիվ 73-1/762326-15 գրությամբ ներկայացված Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանին (ՀՎՀՀ 46418546) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

**1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.02.2014թ. թիվ 73-1/762326-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանին (այսուհետ նաև՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ա/Ձ-ին Ցուցակում ներառելու համար:

**2. Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 10.02.2015թ. թիվ 09/032-196 գրությամբ դիմել է Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանին:

Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանը 03.03.2015թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 2014թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանի միջև կնքվել է ՇՀԱՊՁԲ-10/21-2 ծածկագրով ապրանքների (կահույքի) մատակարարման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր): Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով մինչև 2014թ. դեկտեմբերի 20-ը պետք է պատրաստվեր և մատակարարվեր 3519000 ՀՀ դրամի կահույք, սակայն մատակարարվել է 827250 ՀՀ դրամի կահույք: Թերի մատակարարված կահույքի գումարային ծավալը կազմել է 2691750 ՀՀ դրամ:

Ա/Ձ-ն հայտնել է նաև, որ Պայմանագրի թերի կատարման պատճառ է հանդիսացել 2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ դրամի կտրուկ անկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ, որի հետևանքով ներքին շուկայում թռիչքային ու անկանոն տեմպերով բարձրացել է կահույքի գները:

**3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

Պատվիրատուն 29.01.2015թ. ԴՎԱ/153 գրությամբ Կենտրոնին է տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանի միջև 22.10.2014թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-10/21-2» ծածկագրով պայմանագիրը և Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը վերը նշված գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրով նախատեսված գրասենյակային կահույքն Ա/Ձ

Հովսեփ Պետրոսյանի կողմից մինչև Պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված վերջնաժամկետը (IV եռամսյակ) չմատակարարելու փաստը՝ ՀՀ 2015թ. հունվարի 15-ին միակողմանի, չմատակարարված ապրանքների մասով, լուծել է Պայմանագիրը:

**4. ՍՑ-ԳԲԽ-19/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2014թ. թիվ 73-1/762326-15 գրությամբ Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանի միջև 22.10.2014թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-10/21-2» ծածկագրով ապրանքի գնման պայմանագիր:

2. Ընթացակարգի 1-4 չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակները (այսուհետ նաև՝ ապրանք) Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, նախատեսվել է մատակարարել 2014թ. IV եռամսյակում՝ մինչև 2014թ. դեկտեմբերի 20-ը:

3. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելված՝ գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքներից Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանի կողմից չեն մատակարարվել կամ թերի են մատակարարվել մի շարք ապրանքներ, մասնավորապես՝

***1) Դարակներով պահարաններ (պահարան վաշտի ունեցվածքի անտրեսոլով, եռադուռ 1.35x2.5).***

Պայմանագրի թիվ 2 հավելվածով պահանջվել է մատակարարել 10 հատ դարակներով պահարան, որի միավորի գինը կազմել է 53200 ՀՀ դրամ, սակայն այդ ապրանքն ընդհանրապես չի մատակարարվել,

***2) զանազան կահույք (տակդիր ռադիոսարքավորումների).***

Պայմանագրի թիվ 2 հավելվածով պահանջվել է մատակարարել 60 հատ ռադիոսարքավորումների տակդիր, որի միավորի գինը կազմել է 14450 ՀՀ դրամ, սակայն փաստացի մատակարարվել է 40 հատ ապրանք, այսինքն՝ չի մատակարարվել 20 հատ ապրանք,

***3) բժշկական կահույք (դեղապահարան).***

Պայմանագրի թիվ 2 հավելվածով պահանջվել է մատակարարել 10 դեղապահարան, որի միավորի գինը կազմել է 27000 ՀՀ դրամ, սակայն այդ ապրանքն ընդհանրապես չի մատակարարվել,

**4) *բժշկական կահույք (կողապահարան բժշկական).***

Պայմանագրի թիվ 2 հավելվածով պահանջվել է մատակարարել 100 հատ բժշկական կողապահարան, որի միավորի գինը կազմել է 18500 ՀՀ դրամ, սակայն փաստացի մատակարարվել է 33 հատ ապրանք, այսինքն՝ չի մատակարարվել 67 հատ ապրանք:

4. ՀՀ պաշտպանության նախարարությունը Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանին ուղղված 13.01.2015թ. թիվ ՊՆ 035113 գրությամբ հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում Ա/Ձ-ի կողմից չեն մատակարարվել կամ թերի են մատակարարվել 1-4 չափաբաժիններով նախատեսված ապրանքները՝ 2691750 ՀՀ դրամի չափով:

5. ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.01.2015թ. ԴՎԱ/114 գրությամբ դիմել է Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանին և հայտնել, որ Պայմանագիրը 2015թ. հունվարի 15-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 3.1.7 կետի «բ» ենթակետի և նույն պայմանագրի 7.6 կետի հիմքով, քանի որ Ա/Ձ-ի կողմից Պայմանագրի անբաժանելի մասը կազմող գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետում՝ 2014թ. IV եռամսյակում (մինչև 2014թ. դեկտեմբերի 20-ը) չի մատակարարվել 2691750 ՀՀ դրամի գրասենյակային կահույք:

6. Պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով Պատվիրատուի կողմից Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանի նկատմամբ հաշվարկվել է 123821 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված տույժ, 17595 ՀՀ դրամ տուգանք և տուժանք, 351900 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (Պայմանագրի ընդհանուր գնի 10%), սակայն Ա/Ձ-ի կողմից այդ գումարները չեն վճարվել:

**5. ՍՑ-ԳԲԽ-19/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը**

Կենտրոնն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2014թ. թիվ 73-1/762326-15 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.01.2015թ. ԴՎԱ/153 գրությունն և կից փաստաթղթերը, Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանի 03.03.2015թ. գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանի միջև 22.10.2014թ. կնքված ՇՀԱՊՁԲ-10/21-2 ապրանքի գնման պայմանագիրը և նշված պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 149-

րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ 3 տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանը պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում՝ Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել նույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել այդ ապրանքները և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1 կետով սահմանվել է, որ ապրանքը մատակարարվում է Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Ա/Ձ-ն էականորեն խախտել է Պայմանագիրը: Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Այսպիսով, Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանն ավելի քան մեկ անգամ խախտել է Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետները, այն է՝ թերի է մատակարարել և ընդհանրապես չի մատակարարել

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելված՝ գնման ժամանակացույցով նախատեսված թվով 4 ապրանքատեսակներ (Ընթացակարգի 1-4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքներ):

Նկատի ունենալով, որ Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ավելի քան մեկ անգամ խախտվել են և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդին սույն եզրակացության տրամադրումն Ա/Ձ-ի կողմից չի վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2014թ. թիվ 73-1/762326-15 գրությամբ Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ա/Ձ Հովսեփ Պետրոսյանին (ՀՎՀՀ 46418546) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ա/Ձ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-19/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան